դպրոցի տնօրեն՝
Գեղեցիկ Ավետիսյան

ՀՀ Արմավիրի մարզի «Բագարանի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի

2023-2024 ուստարվա

«ԿԱՆԱՉ ԱՆԿՅՈՒՆ»ԽՄԲԱԿԻ ԾՐԱԳԻՐ

ԿՐԹԱԿԱՆ 2-ՐԴ ԱՍՏԻՃԱՆ, ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ 11-14 ՏԱՐԻՔԱՅԻՆ ԽՈՒՄԲ / 6-9-ՐԴ ԴԱՍԱՐԱՆ /

ԺԱՄԱՔԱՆԱԿ /Շաբաթական 2 ժամ, տարեկան՝ 68 ժամ/

Հեղինակ՝ Գեղեցիկ Ավետիսյան

ԲԱՑԱՏՐԱԳԻՐ

Խմբակը իրականացվում է «ԷՅ ԷՍ ԷՍ ԴԻ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ԿԱՅՈՒՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՆՈՐԱՐԱՐԱԿԱՆ ԼՈՒԾՈՒՄՆԵՐ» ՀԿ-ի աջակցությամբ, որի հիմքում ընկած է սովորողների մոտ «Էկոլոգիական կրթության և դաստիարակության մասին» ՀՀ օրենքով սահմանված էկոլոգիական կրթության, դաստիարակության և մշակույթի ձևավորումը, ստեղծագործական մտածողության զարգացումը, առօրյայում կիրառելի իրերի ինքնուրույն ստեղծումը:

Բնապահպանական գիտելիքները սովորողների կրթական մշակույթի անբաժանելի մասն են կազմում:Էկոլոգիական դաստիարակությունը և կրթությունը ,գիտելիքների ստացումը, բնապահպանական մտածաելակերպի, աշխարհայացքի ձևավորումը սկսվում է դպրոցից: ՀՀ-ում առկա են մշակութային և կրթական որոշակի խնդիրներ ուղղված թափոնների կայուն կառավարմանը,շրջակա միջավայրի պաշտպանությանը և շրջանաձև տնտեսությանը:Ծրագիրը հնարավորություն կտա վարքագծային փոփոխություն իրականացնել ոչ միայն սովորողների շրջանում,այլ նաև համայնքում և հարակից բնակավայրերում՝ ուղղված թափոնների կառավարմանը, արդյունքում ունենալով բավարար իրազեկված, նոր վարքագիծ և մշակույթ ձևավորված հասարակություն:Սույն խմբակի ծրագիրը կազմվել է՝ նպաստելու սովորողների էկոլոգիական համալիր գիտելիքների ձևավորմանը՝ որպես մարդու էկոլոգիական մշակույթի և կենսակերպի բաղադրիչ՝ սովորողների էկոլոգիական կրթության և դաստիարակության իրականացումը:Էկոլոգիական մշակույթի ձևավորումն իրագործելով «ԿԱՆԱՉ ԱՆԿՅՈՒՆ » խմբակի միջոցով՝ սովորողների նախասիրությունների շրջանակներում մեկտեղելով կանաչ հմտությունների և ստեղծագործական մտածողության զարգացումը, կձևավորվի աղբը ոչ թե թափոն , այլ որպես ռեսուրս մտածելակերպը: Խմբակի աշխատանքները իրականացվում են տեսական և գործնական պարապմունքներով:

«ԿԱՆԱՉ ԱՆԿՅՈՒՆ » խմբակի գործունեության նպատակն է

1. Ներկայացնել

- Շրջանաձև տնտեսության դերի կարևորությունը երկրի զարգացման մեջ թափոնների վերամշակման և վերաօգտագործման միջոցով
- Շրջակա միջավայրի պահպանությունը թափոնների կայուն կառավարման միջոցով
- Բնական պաշարների, դրանց անխնա օգտագործման վնասի մասին
- Բնական միջավայրի աղտոտման աղբյուրների, քիմիական արտադրությունների վնասակար ազդեցությունների մասին:

2. Ձևավորել և զարգացնել.

- սովորողների կանաչ հմտությունները և վարքագիծը
- սովորողների դիտարկելու, ստեղծագործելու, հետազոտելու ունակությունները
- տրամաբանական մտածողությունը, գիտական լեզվամտածողությունը,եզրակացություն անելու կարողուրյունը
- շրջակա միջավայրի նկատմամբ բարոյագիտակցական, խնայողական վերաբերմունքը
- առօրյա կյանքում բնության հետ փոխներգործության ընթացքում էկոլոգիական վարքագիծը
- անհրաժեշտ էկոլոգիական գիտելիքները և հմտությունները, որը ծառայում է անվնաս ու սակավաթափոն արտադրության, բնական պաշարների և էներգիայի խնայողության, տնտեսական և այլ գործունեության, ինչպես նաև շրջակա բնական միջավայրի վերականգնման և դրա նկատմամբ հոգատար վերաբերմունքի ձևավորման նպատակին
- էկոլոգիական մշակույթը, որը բնութագրվում է մարդկության կողմից էկոլոգիական հիմնախնդիրների առաջնահերթ լուծման գիտակցությամբ, ինչը նպաստում է առողջ ապրելակերպին, սոցիալ-տնտեսական կայուն զարգացմանը, երկրի և յուրաքանչյուր անձի էկոլոգիական անվտանգությանը, սերունդների համերաշխությանը՝ օգտագործելով բնության հնարավորությունները
- սովորողների էկոլոգիական գիտելիքների ուսուցմանը, էկոլոգիական դաստիարակությանը, էկոլոգիական մշակույթի արմատավորմանը, շրջակա միջավայրի պահպանության, բնօգտագործման և էկոլոգիական անվտանգության բնագավառում անձի ճիշտ և խելամիտ կողմնորոշմանը
- շրջակա միջավայրի պաշտպանությունը, թափոնների կայուն կառավարմանն ուղղված իրազեկվածության մակարդակը և վարքագիծը
- պատասխանատու և նախաձեռնող քաղաքացի:

3.Նպաստել.

- շրջահայաց բնօգտագործմանը, ինչպես նաև մարդու առողջության համար անվտանգ շրջակա բնական միջավայրի ապահովմանը
- թափոններից նոր արտադրատեսակների ստացմանը
- սոցիալական ձեռնարկատիրության զարգացմանը
- սովորողների կարողունակությունների զարգացմանը
- առավել ընկերասեր հասարակության ձևավորմանը
- բնապահպանական գիտելիքներով երկրի պահպանությամբ մտահոգված նոր մտածելակերպով մարդու կայացմանը
- ուսուցչի և սովորողի համատեղ ստեղծագործական համակարգված մոտեցմանը

➢Սովորողների բազմակողմանի զարգացմանը,ինտելեկտի կատարելագործմանը, դիտողականությանը:

4.Արժևորել.

➢էկոլոգիական գիտելիքներով և նոր էկոլոգիական մտածողությամբ օժտված անձի կերպարը
➢ինքնուրույն մտածողությունը և նոր աշխարհայացքը
➢քաղաքացիական դիրքորոշումը և պատասխանատվությունը մարդկության և բնական միջավայրի նկատմամբ
➢ ձեռքի աշխատանքը
➢ ձեռնարկատիրական գործունեության համար նախադրյալների ստեղծումը:

ԾՐԱԳՐԻ ՎԵՐՋՆԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

Խմբակի անդամները կկարողանան՝

1. Տարբերակել ոչ պիտանի տարբեր նյութերից պատրաստված առարկաների հատկությունները, տեսակավորել՝ ըստ համապատասխան հատկությունների, արժևորել և այդ հատկություններին բնորոշ վերաօգտագործել, վերամշակել և երկրորդ կյանք տալ թափոններին՝ ստեղծելով նոր իրեր, որոնք կունենան արժեք

2. իրականացնել վարքագծային մշակութային փոփոխություն ոչ միայն իրենց համայնքում, այլ հարակից համայնքներում նույնպես
3.հավելյալ դրամական հոսքեր ապահովել թափոններից ստացած իրերից
4. սիրո, հոգատար և խնայողական վերաբերմունք դրսևորել բնության նկատմամբ
5. ինքնուրույն գեղարվեստական, դեկորատիվ արվեստի արժեքներ ստեղծել, կանաչ հմտությունների և նորը ստեղծելու հմտությունների զուգորդմամբ

6.ստեղծել նախադրյալներ ձեռնարկատիրական գործունեության իրականացման համար
7. շրջակա միջավայրի նկատմամբ բարոյագիտակցական, բնապահպանական վերաբերմունք ցուցաբերել, տարբերակելով ինչ է թափոնը և ինչպես են դրանք առաջանում
8.նվազեցնել թափոնների քանակը
9. իրեն դրսևորել որպես շրջակա միջավայրի նկատմամբ հոգատար և խնայողական վերաբերմունք ունեցող ակտիվ, ստեղծագործ, նախաձեռնող քաղաքացի:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1	Երկրի բնական ռեսուրսներ: Բնական ռեսուրսների խնայողակաբար կարդյունավետ օգտագործում
2	Վնասակար նյութերի արտանետումների ազդեցությունը
3	Ինչ է թափոնը և ինչպես են դրանք առաջանում : Շրջակա միջավայրում թափոնների ազդեցությունը
4	Ֆիզիկական և քիմիական ազդեցությունները շրջակա միջավայրում
5	Թափոնների կայուն կառավարում:Շրջանաձև տնտեսություն
6	Միջազգային փորձ : Էկոլոգիական ոտնահետք
7	Թափոնը որպես ռեսուրս:Թափոնների տեսակավորում, վերաօգտագործում և վերամշակում
8	Թղթի վերամշակում, վերաօգտագործում;Պլաստիկե իրերի վերամշակում, վերաօգտագործում
9	Պլաստիկե շշերից նկարազարդված գրչատուփի, ծաղիկների, ծաղկամանների պատրաստում
10	Տարբեր տեսակի խաղալիքների պատրաստում և նկարազարդում պլաստիկե շշերից
11	Թղթե թափոններից բացիկների,գրչատուփերի պատրաստում
12	Թղթե թափոններից գրիչների պատյանների պատրաստում
13	Թղթի թափոններից պատրաստել խաղալիքներ,ծաղիկներ,կենդանիներ,
14	Մեկանգամյա օգտագործման ցելոֆոններից ծաղիկների,տոնածառի խաղալիքների,պայուսակների,տիկնիկների պատրաստում
15	Մեկանգամյա օգտագործման սպասքի պարագաներից/բաժակներ,ափսեներ և այլն/ ծաղիկների, ծաղկամանների, խաղալիքների պատրաստում
16	Վերամշակված պլաստիկից /սինտիպոն,մանրացրած հումք/բարձերի, կենդանիների,տիկնիկների պատրաստում
17	Պլաստիկե շշերի խցաններից ծաղկամանների, տարբեր պատկերների պատրաստում
18	Պլաստիկե շշերից և խցաններից ժամացույց, դիտակտիկ նյութեր՝մաթեմատիկական քարտեր,լոտոներ,բազմապատկման աղյուսակների պատրաստում
19	Պլաստիկե վերամշակված թելից պայուսակների պատրաստում
20	Վերամշակված մանրացրած պլաստիկից մոմակալների, զարդերի,հուշանվերների, թվերի պատրաստում
21	Էկո պայուսակների պատրոստում վերամշակված պլաստիկից և հագուստի կտորներից
22	Էտած ծառի ճյուղերից նկարի,ստենդների, պատի թերթերի, շրջանակների պատրաստում
23	Աշխատաժողովների կազմակերպում/խաղեր,զրույց,բանավեճ,քննարկում,արշավներ,էքսկուրսիաներ,այցելություն էկոլոգիակն,բնապահպանակն կենտրոններ,հանդիպումներ բնապահպանների և շրջակա միջավայրի աշխատակիցների հետ,ցուցահանդես-վաճառք/

ԾՐԱԳՐԻ ՏԱՐԵԿԱՆ / ԹԵՄԱՏԻԿ ՊԼԱՆԱՎՈՐՈՒՄ

Հ/հ	Բովանդակություն	նպատակ	ժամաքանակ	նշումներ
1	Երկրի բնական ռեսուրսներ: Բնական ռեսուրսների խնայողակաբար կարդյունավետ օգտագործում	Ձևավորել և զարգացնել երկրի բնական ռեսուրսների մասին գիտելիքները: Ձևավորել բնության նկատմամբ խնայողական վերաբերմունք և դրա հարստությունների գիտակցորեն օգտագործում	1	
2	Վնասակար նյութերի արտանետումների ազդեցությունը	Զարգացնել վնասակար նյութերի արտանետումների ազդեցությունների վեաբերյալ գիտելիքներ և վերլուծական հմտություններ	1	
3	Ինչ է թափոնը և ինչպես են դրանք առաջանում Շրջակա միջավայրում թափոնների ազդեցությունը	: Գաղափար ունենալ թափոնների և նրանց առաջացման մասին: Գաղափար ունենալ շրջակա միջավայրում թափոնների ազդեցության մասին	1	
4	Ֆիզիկական և քիմիական ազդեցությունները շրջակա միջավայրում	Իմանա շրջակա միջավայրում Ֆիզիկական և քիմիական ազդեցությունները	1	
5	Թափոնների կայուն կառավարում; Շրջանաձև տնտեսություն	Իմանալ թափոնների կայուն կառավարման մեխանիզմները Գաղափար ունենալ շրջանաձև տնտեսության մասին	1	
6	Միջազգային փորձ : Էկոլոգիական ոտնահետք	Գաղափար ունենալ միջազգային փորձի վերաբերյալ: Իմանա ինչ է Էկոլոգիական ոտնահետքը	1	
7	Թափոնը որպես ռեսուրս:Թափոնների տեսակավորում, վերաօգտագործումն վերամշակում	Իմանա , թափոնը՝ աղբ չէ, այլ՝ ռեսուրս :Իմանալ ինչպես տեսակավորել,վերաօգտագործել և վերամշակել թափոնները	1	
8	Թղթի վերամշակում, վերաօգտագործում;Պլաստիկե իրերիվերամշակում, վերաօգտագործում	Կարողանալ վերամշակել և վերաօգտագործել թուղթը Կարողանալ վերամշակել և վերաօգտագործել պլաստիկը	1	
9	Պլաստիկե շշերից գրչատուփի, ծաղիկների, ծաղկամանների պատրաստում	Զարգացնել դիտարկելու, ստեղծագործելու, հետազոտելու ունակությունները	4	
10	Տարբեր տեսակի խաղալիքների պատրաստում և նկարազարդում պլաստիկե շշերից	Զարգացնել սովորողների կարողունակությունների զարգացմանը	4	
11	Թղթե թափոններից բացիկների,գրչատուփերի պատրաստում	Ինքնուրույն ստեղծագործական մոտեցումների զարգացում	4	
12	Թղթե թափոններից գրիչների պատյանների	Ինքնուրույն ստեղծագործական	4	

	պատրաստում	մոտեցումների զարգացում		
13	Թղթի թափոններից պատրաստել խաղալիքներ,ծաղիկներ,կենդանիներ,	ինքնուրույն գեղարվեստական, դեկորատիվ արվեստի արժեքներ ստեղծում	4	
14	Մեկանգամյա օգտագործման ցելոֆոններից ծաղիկների,տոնածառի խաղալիքների,պայուսակների,տիկնիկների պատրաստում	նորը ստեղծելու հմտությունների ձևավորում	4	
15	Մեկանգամյա օգտագործման սպասքի պարագաներից/բաժակներ,ափսեներ և այլն/ ծաղիկների, ծաղկամանների, խաղալիքների պատրաստում	Ձևավորել շրջակա միջավայրի նկատմամբ բարոյագիտակցական, բնապահպանական վերաբերմունք	4	
16	Վերամշակված պլաստիկից /սինտիպոն,մանրացրածհումք/բարձերի, կենդանիների,տիկնիկների պատրաստում	Կարողան վերամշակված հումքը նպատակային օգտագործել	4	
17	Պլաստիկե շշերի խցաններից ծաղկամանների, տարբեր պատկերների պատրաստում	Կարողանա նվազեցնել թափոնների քանակը շրջակա միջավայրում	4	
18	Պլաստիկե շշերից և խցաններից ժամացույց, դիտակտիկ նյութեր՝մաթեմատիկական քարտեր,լոտոներ,բազմապատկման աղյուսակների պատրաստում	Գիտակցի նոր կյանք տված իրերի կարևորությունը դասապրոցեսներում, որպես դիտակտիկ պարագաներ օգտագործելիս	5	
19	Պլաստիկե վերամշակված թելից պայուսակների պատրաստում	Հասկանա, որ պլաստիկը նաև հումք է	4	
20	Վերամշակված մանրացրած պլաստիկից մոմակալների, զարդերի,հուշանվերների պատրաստում	Կարողունակությունների զարգացում	4	
21	Էկո պայուսակների պատրոստում վերամշակված պլաստիկից և հագուստի կտորներից	Էկոլոգիական դաստիարակության և վարքագծի ձևավորում	4	
22	Էտած ծառի ճյուղերից նկարի,ստենդների, պատի թերթերի, շրջանակների պատրաստում	Զարգացնել առօրյա կյանքում բնության հետ փոխներգործության ընթացքում էկոլոգիական վարքագիծը	2	
23	Աշխատաժողովների կազմակերպում/խաղեր,զրույց,բանավեճ,քննարկում,արշավներ,էքսկուրսիաներ,այցելություն էկոլոգիակն,բնապահպանակն կենտրոններ,հանդիպումներ բնապահպանների և շրջակա միջավայրի աշխատակիցների հետ,ցուցահանդես-վաճառք/	Զարգացնել էկոլոգիական դաստիարակութունը և բնապահպանական մտածելակերպը, ուսուցչի և սովորողի համատեղ ստեղծագործական համակարգված մոտեցումը, Սովորողների բազմակողմանի զարգացու,ինտելեկտի կատարելագործումը, դիտողականությունը	5	
Ընդամենը			68	

ՊԱՀԱՆՋՎՈՂ ՆՅՈՒԹԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲԱԶԱ

՝Բազարանի միջնակարգ դպրոց՞ՊՈԱԿ-ում առկա է առանձնացված սենյակ, որտեղ սովորողները կարող են անցկացնել արտադասարանական խմբակի պարապմունքները:Դասասենյակը վերանորոգվել, անհրաժեշտ հյութերով և սարքավորումներով ապահովվել է ՝ԷՅ ԷՍ ԷՍ ԴԻ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ԿԱՅՈՒՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՆՈՐԱՐԱՐԱԿԱՆ ԼՈՒԾՈՒՄՆԵՐ՞ ՀԿ- ի ֆինանսավորմամբ և աջակցությամբ:Առկա է պահարաններ,աշխատանքային սեղաններ,աթոռներ, նկարչական պարագաներ, ձևավորման համար անհրաժեշտ նյութեր և գործիքներ, մարկերային գրատախտակներ, 2 կարի մեքենա, 1 ասեղնագործության մեքենա, 1 օվերլոկի մեքենա, տեսակավորման ակղներ, վերամշակված պլաստիկ նյութեր, պլաստիկ շշերից վերամշակված սինտիպոն, մանրվածքներ, թելեր, կտորներ:Առկա է ուսուցիչ , ով կարող է աշխատել և ղեկավարել խմբակը:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ, ՀՂՈՒՄՆԵՐ

1.Մայիլյան Ռ.Ս.,Եղիազարյան Ս.Ս.,Դավթյան Ն.Հ. ՝Էկոլոգիա և բնապահպանության հիմունքներ՞:

2.Խ.Միրիմանյան՝Բնության պահպանության հիմնական խնդիրները՞:

3.Հայրումյան Կ.Ա.Գաբրիելյան Է.Ց.,Ղազարյան Վ.Օ. ՝Կարմիր գիրք՞:

4.Ռ.Մարտիրոսյան,Ա.Հովսեփյան՝Անձի էկոլոգիական կուլտուրա՞2005թ.

5.Մ.Դավթյան ՝Շրջակա միջավայր և բնապահպանություն՞2010թ.

6. Կ.Գրիգորյան և այլոք՝Էկոլոգիայի և բնության պահպանության հիմունքներ՞2010թ.

7. Ռ.Մարուխյան,Ա.Հովսեփյան՝Էկոլոգիական դաստիարակություն՞,՝Հայաստանի էկոլոգիական իրավիճակը՞,՝Էկոլոգիա և մշակույթ՞:

1.http://ecoman.do.am/

2.www wikipedia.org

3.http://lssdngo.com/

4.http://www.mnp.am

5.https://ace.aua.am